



միջոցները . Աս իրողութիւն է .  
Իսկ թէ ո՞ր վարժարանը յաճա-  
խող աղաքը գոհ են ու կ'օգտուին ,  
աս ալ տղոց ծնողքները իրենք  
կը զգան . աչքի առջեւ ունենա-  
լով անոնց տրամագրութիւնը՝  
մրցանակը մասնաւոր վարժարա-  
նինն է :

Անգին , նոյն այդ վարիչները  
իրենց արբանեակներով , դա-  
տարկութեան մէջ սկսան իրենք  
իրենց «ճիշտ» խաղալ , իրենք  
իրենց պիտո՞ճէ գծեցին , ուսու-  
ցիչ բերին ( ) , վարժարանները  
բացին՝ անարգելք գործելու ,  
գործերը կանոնաւոր առաջ տա-  
նելու յիմար ու ապուշ յոխոր-  
տանքով :

Կարգը եկաւ դրամին . որ դուռ  
որ դարկին՝ արհամարանքի հան-  
դիպեցան և դուռը երեսնուն  
«ճրար» գոցուեցաւ :

Արգէն նախորդ տարիէն ահա-  
գին պարտք մը գիշած էին , ու  
սուցիչներու ամսականներ ան-  
վճար մնացած են մինչեւ հիմա ,  
ու ներկայ տարուանն ալ ե՛լաւ ի-  
րարու վրայ դիզուեցաւ : Ահա-  
գին բռնի մը պարտքին տակ ,  
զատարկ սնտուկով ուր լեցու-  
ցած էին անշուշտ նենգութիւն-  
ներ ու վատութիւններ , սկսան  
պալ և ինչալով ելնելով ան-  
զուղիղ ծայրը հասան , ու հա-  
զիւ իրենց երեսին իրենց ձեռ-  
քով ապտակը հասցնելու վրայ ,  
ահա , կարգ մը բարեմիտներ  
դէմ կըլձաղեն զարծես ըսել ու :

(\*) Մէկը—անօրէնը—պ. կրօն Մի-  
քայէլեանը , որբերու անունը՝ անխիղ-  
ճօրէն շահագործող ծանօթ շվախէն :  
Յ. Հ.

զելով .  
— Ձէ՛ , կեցիք , դուք շատ  
աշխատեցաք , շատ յոգնեցաք ,  
ձեր աշտոտութիւնները ձեզի ,  
բայց մենք կը շալկենք ձեր  
պարտքերու բեռը . . .

է՛ , բռնան տակէն հրաշքով  
պրծողներուն յոխորտանքը . —  
օ՛ , ատ նշանակութիւն չունի .  
անյիշաչար պէտք է ըլլալ :  
Ու այսպէս , կարգ մը ազգա-  
յիններ , ձեռք ձեռքի տալով ,  
կուգան կամաւոր կերպով նախա-  
ձեռնարկ ըլլալ թողուած բեռը  
շալկելու :

Ո՞ր տեղէն պիտի արուի , ին-  
չո՞վ պիտի վճարուի հին պարտ-  
քերը , նոր շրջանին բացը . —  
յայտնի չէ . միայն «ժողովուրդ»  
բառն է միակ յոյսն ապուէնը :

Բայց «ճոռ» նստինք , շիտակ  
խօսինք .

Ձեմ յուսար թէ , գործերը  
կանոնաւորելու ձեռնարկող բա-  
րեմիտ անձերու ջանքերը բա-  
րեմտօրէն պակասին , ու յաջողին  
իսկապէս անկեղծ , կարող և գա-  
ղափարական մարդիկ գործի գը-  
լուխ անցնիլ : Ապահովաբար  
նորէն էնթրիքները պիտի ըլլան  
անոնց վարձատրութիւնը :

Եւ ըսենք ալ որ , ասանկ գործ  
մը շրջանին էիսուն չէ որ կրնայ  
յաջողիլ , ինչ տեսակ թաղակա-  
նութիւն մըն ալ ընտրուի , ան-  
կարելի է որ յաջողի : Ընտրուե-  
լիք թաղականութիւնը պէտք է  
որ , ինք շալկէ ի , ձեռքով պատ-  
րաստուած պիտո՞ճէին բեռը , ոչ  
թէ ուրիշին չի կրցած տարա-  
ծը :

Խոստովանինք նաև որ , որքան

ատեն նիւթապէս կարող անձերու  
մասնակցութիւնը , ընկերակցու-  
թիւնը շրջալայ ընտրուելիք թա-  
ղականութիւն մէջ , գործը կը  
կայայ :

Եթէ երբէք իսկապէս կարող և  
արժանաւոր անձեր ընտրուին և  
հիմակուց յանձնառու ըլլան ,  
յառաջիկայ շրջանին մէջ գոր-  
ծերը , վարժարանը կանոնաւո-  
րելու յոյսով , պէտք է որ նա-  
խատեսութիւնը ունենան հին  
պարտքերուն բեռը վրանին  
չառնելու . որպէսզի իրենց ու-  
ժերը չի ջլատուի և գործը յա-  
ջողի :

Վերջի «խաբ» փարա չընէր :  
Իսկ մենք սրտանց կը բաղձանք  
որ այս անգամ գոնէ լաւ մարդիկ  
գործի գլուխ անցնին ու յառա-  
ջիկայ շրջանին վարժարանը ու-  
նենայ փայլուն վիճակ մը :

Ֆիլիպի 20 դեկտ. ԴԻՏՈՂ

ՇՈՒՄԼԱՅԻ ՏՆՕՒԷՆ ԴՈՍԱՏՈՒԻՆ

Պարոն , ձեր մտքի հաւապա-  
րակչութիւնը կորսնցուցած ըլ-  
լալ կ'երեւիք . ձեր անկապ և ա-  
նիմաստ խօսքերու հաւաքածոն  
կարգաւորը այս գաղափարը մի-  
այն կրնայ կազմել ձեր վրայ :  
Վիճարանութենէ խոյս տալ , հա-  
կեռակորդին «եղի տալ և նմանօ-  
րինակ կարգ մը անտեղի խօսքեր  
կ'ընէք : Կը զառանցէ՞ք , ինչ  
կ'ընէք : Ձեզ հետ վիճարանելու  
պատիւը ե՞րբ ըրինք ձեզ , որ հի-  
մա ալ ելնենք խոյս տանք : Կար-  
գացած և ըսածը չը գիտցողիմը  
հետ վիճարանութեան մասնակա-  
րելի՞ է : Ձեր վիճակին վրայ ար-

գահատողի մը կողմէ ուղղուած  
քանի մը յանգիմանութիւնները  
իրբ վիճարանութիւն կը նկա-  
տէք :

Առաջին ճնգամ հագարաբնու-  
թեան մեր ըրած գիտողութեանց  
մէջ կը հարցնէինք թէ՛ ուսու-  
ցիչներէն միոյն ինչու՞ աւելի  
կարևոր դասեր չեն յանձնուած ,  
և կասկած յայտնած էինք՝ թէ  
մի՞ գուցէ տնօրէնի պաշտօնը ան-  
ուանական լլալայ : Այդ խնդիրոյն  
վրայ կրկին դառնալով պէտք չը  
զգացինք , որովհետեւ ձեր պա-  
տասխանը լիովին արդարացուց  
մեր կասկածները և աւելին իսկ  
ըրաւ :

Եղած կարգադրութեան մը մա-  
սին յայտնուած գովոհուրթեան մը  
գոհացուցիչ պատասխան մը տալ  
կը կարծէք յայտարարելով թէ  
այդ որոշումը ձեր բարձր նախա-  
գահութեան ներքեւ տրուած է՞ :  
Ապրիլ , Պ. Նախագահ . Եւ ահա  
այս ձեր ջանքախաչ պատասխա-  
նովն է որ այժմ ելիք՝ չտես կեց-  
պով մը կ'ընէք «Նէ՛ , ինչպէ՞ս ,  
իրական տնօրէն մը ըլլալու հա-  
ժողուեցա՞ք» : Այդպիսի պա-  
տասխան մը տալէն չի տալը լաւ-  
ագոյն էր : Եթէ կը կարծէք որ  
այդպէս բերնեւնուց եկածը դուրս  
տալով իսկապէս տնօրէն ըլլալու  
պատասխան արժանացար , ձեզ  
տեսնեմ , այսանգամ ալ քանի մը  
գիշեր տընեցէք . որպէսզի քա-  
նի մը տասնեակ տակը ծակ նա-  
խագատութիւններ ևս դարձնէք ,  
և այն ատեն ընդհանուր Պուլիա-  
րիոյ հոյ վարժարաններու տե-  
սուչ ըլլալու փառքին ինքզինք-  
նիդ արժանացած պիտի տեսնէք :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

ՄԱՍ II  
III

Սեպտեմբերի 28ի առաւօտը էջմի-  
ածնի փակքի հիւրանոցի «Ազգաբա-  
պատի» ներսէսեան լճի դիմացի կոտա-  
րի վրա կանգնել է՛ Վահէն և հիացած  
գիտում է իր առջեւը բացված հրա-  
շալի սեռարանը :  
Իսկապէս տեսարանը հրաշալի է .  
ուրբերի տակ փովելէ՛ ներսէսեան  
լիճը և իր փոքրիկ ալիքներով խա-  
ղում է արեւի հետ , մի քիչ հեռուն  
նոյն գործունեայ կաթողիկոսի ար-  
հեստական անտառը աշնանային մեղմ  
մշուշի սիջից դուրս է ապառաժում իր  
կանաչ ստուերագծերը . աւելի հե-  
ռուն դաշտի մէջ հսկայ Արարատը  
ցըցված Հայաստան աշխարհի սրտի  
մէջ իր յաւիտենապէս ալեւոր գլուխը  
յանդգնաբար երկնքի մէջ միսած կար-  
ծես խորհրդակցութեան մէջ լինի եր-  
կնքի հետ :

Հայաստանի հսկայի կատարը զար-  
դարող սառցակոյտերը՝ արեւի բաց

ուկեզոյն ճառագայթների հետ համ-  
բուրելով , շողողում են հսկայական  
լապտերի պէս , որի լոյսը ցերեկն էլ  
կարող է երևալ , Փոքրիկ Մասիսը իր  
հարազատ հսկայի փոխարէն կպած կարծես  
ձիգեր է թափում նոյն բարձրութեա-  
նը հասնել :

Ու Վահէն դիտում է այդ բոլորը  
սքանչացած , նրամաքով անցնում են  
հազար ու մի ծանր խորհրդածութիւն-  
ներ . նա այդ ահագին տարածութեան  
մէջ մտքով որոշում է հուշակաւոր ու  
պատմական Սեւասյուրի գաշտը—Տղմու-  
տը—Վարդանը—Եղիշէն—հայոց փափ-  
կասուն տիկիները—մի խօսքով պատ-  
մական բոլոր սակաւաթիւ դէպքերը  
որոնց մէջ հայ ժողովուրդը իր ամէն  
խաւերով ըմբոստութեան , ազատասի-  
րութեան փաստեր է աւել : Անցեալը  
Վահէին անդրադարձնում է դէպի  
ներկան . կրկին արիւնտա ներկան . ա-  
րիւն , որը ոչ միայն Տղմուտն ու Աւա-  
րայրն է ներկել , այլ ամբողջ Հայաս-  
տանի դեպերը , ձորերը , լեռները և  
դաշտերը . Մասունից մինչեւ Ձէյթուն  
Արարատեայ մինչեւ Տաւրոս : Վահէի  
ճակատը կեճուողում է , չրթուրները  
սեղմվում են , ատամները ինքնաբերա-  
բար կրճտում են . և նա նայում է  
հսկայ Արարատի այն կողմը , որով  
վաղը կամ միւս օրը ճամբա պէտք է  
ընկնի դէպի Վան :

Երեկոյան փամի չորան է . էջմիած-  
նի յանգագները զօղաճում են որո-  
տնդոտ . վաղը Սուրբ Գէորգի տօնն  
է . այն սուրբի , որը պաշտված է Արա-  
րատեան և Կովկասեան յորր հայ  
դաւառների ժողովրդից :

Արցախից , Ջաւախքից , Գուգարքից ,  
Շիրակից , Լոռիից , Սիւնիքից , Կող-  
պից հայ ժողովուրդը իր առանձին  
տարածքներով հասարակ է էջմիածին .  
թէև ուխտատեղին Մուղղու վանքն է ,  
բայց մեծ ամասնութիւնը էջմիածին է  
մնում , Մայր Բաթրի մէջ—ուր հայոց  
կաթողիկոսն է , ուր յոյս է իջել ,  
ուր Տրգատն ու Ռոսարովիդուտը աշ-  
խատել են Վանքի պատերը բարձրաց-  
նելու համար , ուր նահատակվել են  
հրաշալի Հուրիսիմէն , Շողակաթը և  
Գայանէն :

Մայր վանքի մէջ նախատօնանք է ,  
ձերուէի , թէև ոչ սիրելի կաթողիկո-  
սը , գեղեցիկ ամբողջանի տակ , իր  
հետեւորդ եպիսկոպոսներով , կարմ-  
բազմաւ շաթիւրներով , ձեզքում է  
խայտաբղէտ հայ ամբողջ եկեղեցի  
մտնելու , ու ժողովուրդը իր կրօնա-  
կան պեխի հայքով սքանչած՝ ակնա-  
պիչ , սահմանակամ դիտում է այդ տե-  
սարանը և նրա ետեւից թափում է  
կեղեցի :

Ամբոսի մէջ է և Վահէն . Սիրա-  
նուշի հետ , նա բարկացած , յուզված ,  
ատում է իր նշանածին :

— Տես Շուշանիկ , տես այս ամբո-  
սին , նայիր որչափ ակնամաւք ունի  
դէպի կաթողիկոսը , դէպի եպիսկո-  
պոսը , դէպի սևաղջեստը , ժողովուր-  
դը դրանցից շատերն չէ սիրում ատում  
է , հայտնում է . այս կաթողիկոսին  
անիծում է , բայց տես , հիմա , կա-  
տարեալ ոչխար դարձած , ընկնում  
է դրանց սուքերի տակ , Պատրաստ է  
դրանց սուքերի կսխած տեղը համ-  
բուրել :

Այս տեսարանը տեսնելով կարելի  
է գուշակել թէ՛ երբ մեր կաթողի-  
կոսները—եպիսկոպոսները իսկապէս  
ժողովրդի ցաւերով հետաքրքրվեն ,  
նոյն այդ ժողովրդի ձեռքով հրաշք-  
ներ կը գործեն :

Ես որ դրանց ոչ մէկին չեմ յարգում .  
թէ կուզ սուրբ դասան . ես էլ ըն-  
կեղեցի . ամբոսի , հսկայական ամբոսի  
ստրկական դիրքը այնքան վարակող  
է որ ամենակեպտիկ մարդն անգամ  
ենթարկվում է կորցնում է իր հո-  
գեկան անկախութիւնը . ես էլ նոյն  
խոնարհութեամբ հանդիսատես եղայ  
կաթողիկոսական այդ պնասարդ  
թափուրին . . .  
Ահա այդ է մեր ժողովուրդի ամե-  
նամեծ վերքերից մին . նա ըմբոստ,  
անկախ չէ իր տան մէջ , իր վատ  
պաշտօնեաների հանդէպ , ուր գրեթէ  
չնշխ գոհողութիւններ պիտի ունենայ .  
ինչպէս կարող է ըմբոստ լինել բռնա-  
ւորի դէմ , որը ամէն մի ըմբոստու-  
թեան համար կեանք եւ հարստու-  
թիւն կարող է իւրել նրանից :  
(Շարունակելի)

Յայտ յանդիման իրողութիւն մը կայ մէջտեղը . մենք հրապարակաւ հոգաբարձութեան երեսին կը պօսուանք թէ՛ դուք ազգին դըրամներուն գործածութեան մէջ պեղծութիւնները եղաք այդպիսի անտրամաբանական կարգադրութիւններ ընելով . եթէ ըրածնի զրպարտութիւն մըն է , ինչու՞ պատասխան չը տրուիր . իբրև փաստ մը միշտ մէջտեղ կը նետուի թէ՛ հայ ուսուցիչներուն ըստարժանութիւն գնահատուած չ'ըլլալը պատմական իրողութիւն մէ՛ . ինչո՞ւ ու կրակ մա'րդ , չը պիտի կրնա՞ք երբէք հասկնալ . տարբե'ր բան է՞ հայ դատաստան պէտք եղածին չափ չը վարձատրել , տարբե'ր բան է՞ միևնոյն վարձարանին մէջ տնօրէն դատաստանին 850 ֆր . , իսկ եկրորդական դատաստան մը 1000 ֆր . : Գուկարիսյո՞ր մասին , ո՞ր քաղաքին մէջ տնտեսուած է այսպիսի նորճօրինակ բան մը :

Գարձեալ , Պ. Տնօրէն , կը կարծէք թէ « Բէյֆի շինող » վարձապետ ըսելով ձեզ ակնարկել ուզածնիք : Եթէ խել : Ըսուած բանին նշուել ձեր քով գտնուած ըլլար , պիտի կրնայիք զուշակել թէ այդ տիտղոսը անոնց ճակտին կը զբաղուէր , որոնք երկրորդական պաշտօն մը ունենալով հանդերձ լեցուն ամսական մը կը ստանան :

« Բէյֆի շինող » վարձապետ ըլլալ ինքնին շատ պատուաբեր չ'է , բայց այդ ալ նորէն բան մ'ընելու կարող ըլլալ կը նշանակէ . իրողութիւնները թոյլ չ'էին տար մեզ այդքան պատիւն ալ ընել ձեզ . Մենք ձեզ ապիկարներու դասը դատած էինք , նորոնք ամէն խնդրոյ մասին անտարբեր մնալու 100 հոտ թէ մէննա՞ ընել զիտեն , բաւական է որ փորձերին կշտանայ :

Հասկցուեցանք . Մեր այս արգարացի յանդիմանութիւնները պիտի կրնան ուշաբերել ձեզ թէ ո՞չ : Հակառակ պարագային մենք պիտի պարտաւորուինք խնդրել մեր թիշկ բարակամներէն , որ ձեզ տուող ազատական մի քանի կարեւոր պատուէրներ տան : Որովհետեւ ձեզ յիման արթուն եղած միջոցին զառանցող , շունեցած արժանիքն ունենալ կարծող , տնօրէն , մանկավարժ . . . մինչև իսկ կայսր - երեւակայութեամբ անշուշտ - եղողներու համար միակէ գարմանը այս է : Բայց այդ պիտի ներս տեղը հայ վարձարանները չ'են , այլ . . .

Շումլացի

**Տ. Խմբագիր**

Յանուն Ազգ . արժանապատուութեան հաճեցէք ներկայս « Նոր ժուժ »-ի ամենամօտ թիւոյն մէջ հրատարակել :

95 . Թիւ « Խրաւունք » լրագրոյ մէջ կարգադրութիւն Գերովրէ Ոսկերիչեանի գրութիւնը որ լրագրոյ 377 թիւոյն մէջ հրատարակուած ճշմարիտ եղելութիւնը փոխանակ հաստատելու այլանգակ ու դատաստան մը մինչև իսկ « Ժուլունպաճի » մը չի վայելած հայհոյութիւններով ու ստուծիւններով սրտնակներ լեցած էր : Ինչ մանաւանդ մեր անձնուէր դատաստանի վրայ եղած սուտ ու անհիմն տնտեսականութիւնները հարկադրեցին մեզ ի պաշտօնէ ճշմարտութիւնը տեղեկագրել :

Ինչպէս 1900 օգոստոսի վերջերը « Բերովրէ Ոսկերիչեան Պաղճիեան վարդապետի յանձնարարականութեամբ հոգաբարձութեան ներկայացուցաւ . սակայն հոգաբարձութիւնս անոր ֆիլիպէի անցուցած կեանքին մօտէն տեղեկ ըլլալով արժան չի համարեց զայն պաշտօնի կանչել , նա մնաց աստ մասնաւոր տան մը մէջ 6-7 տղաքներ գլխուն ժողովուած , շարունակ ջանաց կուտակցական սերմեր ցանել , ի մէջ այլոց նոյն տարին իւր գրգռմամբ տեղոյս իսթէկթօրութեան իմացուցին պ . Վաղարշ Գրգռեանի վկայագիր շունենալը որմէ եկած հրամանին համաձայն հարկադրուած էինք վարձարանը գոցել և որովհետեւ ազգ . վարձարանի փակումը ոչ միայն մեզ այլ ամէն ճշմարիտ հայու մեծ ցաւ պիտի պատճառէր իսկոյն Տ . Վարդանեանի դիմեցինք և խնդրեցինք որ ի սէր ազգ . մանկտոյն հաճի ուսուցչութիւնը ստանձնել :

Տ . Վարդանեանի առևտրական գործը բնական էր որ պիտի խանգարուէր ուստի մեզ խօստացաւ թէ « դուք իմ անունովս վարձարանը բացէք ու ես օրական մէկ երկու ժամ ձեր բար կը դատաստանեմ և արգարե խթակթօրութիւնը ընդունեց մինչև Պ . Վաղարշ Գրգռեանի վկայագրին գալը » : Եւ այս օգոստոսի վերջերը ֆիլիպէի իսթէկթօրութեան ըստ օրինի նոր բանուէրի դատաստան « օրօքումէն տնտեսները ուղտեցաւ , պ . Վաղարշ Գրգռեանի տօրումէն տները զրկեցինք , դեռ պատասխանը չեկած սպաս . Չին այլ ջեւու հովի Պաղճիեանը մեզ կանչելով ուղեց հասկնալ նպատակնիս , հաղորդեցինք իրեն թէ իսթէկթօրութեան հրամանի կուպանք , ցաւ է ըսել որ հետեւեալ օրը քանի մը մարդերու զըլուխը անցած գարօցին գաւնիքերը կոտորելով իրեն քրոյ թու « Բերովրէ Ոսկերիչեան ( որ տեղոյս ազգայնոց բացի մէկ քանիներէ սիրելի չէ երբեք )

վարձապէտ կը կարգէ , իսթէկթօրը մեր գանդիտա դատաստան տօքումէն տները ինչպէս Ոսկերիչեանի չընդունելով հրամայած էր փա ել վարձարանը մինչև օրինաւոր վկայագիր ունեցող վարձապէտի մը գտնուելը : Հարկադրուէր քանի փակել , ուր վերը յիշուած միջադէպերը Պաղճիեանի թեւադրութեամբ քանի մը անգամներ կրկնուեցան Ոսկերիչեան շարունակեց իր գործը թեւ ուստի կանութեան առջև ստորագրութեան ներքև խոստացած էր այլևս ոտք չի կոխել ազգ . վարձարան :

Ինչ հոգաբարձութեանս վազեարացումը եկածին պէս դիմեցինք Տ . Վարդանեանի որ հաճի այս տարի ես վարձարանին մէջ դատաստող ( քանի որ չ'կրցինք ըստ օրէնի վկայեալ դատաստու մը գրուել ) մեծ գծուարութեամբ ի սէր մանկտոյն յանձն առնել խօստացաւ և որին վկայագրեցրը առնելով անձամբ իսթէկթօրութեան գայինք որ ընդունելով հրամայեց բանալ վարձարանը . հետեւեալ օրը նոյ . 27 . ին որ վարձարանը պիտի բացուէր , տեղոյս քահանայի խուսափումը արգելք եղաւ , իսկ յաջորդ օրը թաղ պատրաստուած գարշելի ծրագրին զոհ գնաց , որու մասին Անտոն Նահրիկեան լրագրող պատ . թղթակիցը կէտ առ կէտ ճշտութեամբ գրած էր ի բաց առեալ կարգ մը անպատուաբեր արարքներն որ խոհեմութեամբ լուրեան անցած էր : Ահա այսպէս վարձարանիս բացումը ձգձուեցաւ , դեկ . 15 չըթ . կէսօրէն յետոյ ֆիլիպէի Օգրումէնի իսթէկթօրը անձամբ տեղս գալով ուստի կանաւուն շեց հոգաբարձութիւնս և եկած բարձրագոյն հրամանները հաղորդելով վարձարանին բանալիները մեզ յանձնեց և հրամայեց ըր օրու ընէ սկսեալ բանալ վարձարանը , արգելք հանդիսացանք իսխտ պատժով պատժուելին յայտարարելով և Տ . Վարդանեանի վկայագրերը ընդունելով , զայն միայն ի պաշտօնէ դատաստու ճանչցուիլը իմացուց . իսկ Ոսկերիչեանի վկայագիր չ'ունենալը զրկած է զինքը Պուկարիոյ մէջ ազգ . կալ' անհատական վարձարանաց մէջ դատաստութեան . առ այդ հոգաբարձութիւնս զոհ որտով մեկնեցաւ և դեկ . 17 ին ազգ . վարձարանը բացուեցաւ , վեց ամիս երկար արձակուրդէ յետոյ շնորհիւ Պաղճեան վարդապետին :

Ինչպէս կերել Ոսկերիչեան իւր շար կրից յագուրդ տալու համար կարգ մը ստուծիւններով ու զրպարտութիւններով հիմակաշխատի վհատեցնել վարձարանիս պատ . ուսուցիչը որպէս զինա հեռանայ և ազգ . վարձարան

նը փակուի , սակայն ինչ որ ալ ըլլալ իր սեր իր գլխուն . մենք զոհ ենք Տ . Վարդանեանի պաշտօնավարութեան քանի որ նա խորդ սարիներու մէջ անձնուէր աշխատութեամբ և համակրելի բնաւորութեամբ թէ տղգայնոց և թէ հոգաբարձութեան համակրանաց արժանացած է , ուստի աներկբայ ենք որ նա այդպիսի վայրահաշուութեանց կարեւորութիւն չի տալով միևնոյն ոգով յարատև է իւր սկսած գործը , որին համար հրապարակաւ մեր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնեմք :

Ի դիմաց խորհեան Ազգ . վարձարանի . հոգ . Ատենադպիր Ատենապետ թ . Մ . Նիկողոսեան Պ . Յարութիւն 1901 զեկտ . 28 Թաթար Բազարբը

**Հ. ԵՖՔԻՆ ԶԷ ՄԵՂԱՒՈՐԸ**

Հայ յեղափոխականների միութեան խնդրով երբ հետաքրքրվում է Սուլթանը ասող հայը , մենք հասկանում ենք , սակայն երբ « Խրաւունք »-ի խմբագիր Գուրպէթեան շ . ԵՖՔին , Հագուցի միջոցով Սուլթան Համբախին աղերսող , Հայ յեղափոխականներին աւազակներ յորջորջող թրքական այդ խմբագիրն էլ յանդգնում է այդ տեսակ զուտ աղգային խնդիրների մէջ խառնվել , մենք մնում ենք շարած այդ անսահման անպատկառութեան առջև .

Բայց մեղաւորը Գուրպէթեան շ . ԵՖՔին չէ , այլ հասարակութեան այն մասը - որ Գուրպէթեանի պէս , դտեղը եկաւ հայ է նա , տեղը եկաւ « այլազգի » . բայց իրօք ոչ ոյս և ոչ այն , այլ ճնուեղ մի նոր ազգի :

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ**

Թաղական խորհրդոս հրապարակաւ իւր շնորհակալիքը կը յայտնէ Ռուսմանիոյ և Սուլթանի ոյն աղնիւ ազգայնոց , որոնք տեղոյս ազգային վարձարանի վերաշինութեան մնացած պարտուց բարձման ի նպատակ տեղի ունեցած հանգանակութեան մասնակցեցան ձեռամբ արժանապատիւ Տէր Սարգիս հայր Ղարիպեանի :

Մնամք յարգանքս ի դիմաց թաղ . խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս . Գարրիէիան Յ . Մ . Թովմասեան

